



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 4 » ֆեբրվարի 2020թ.

№ 102-Կ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի  
1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի  
2019 թվականի փետրվարի 15-ի «Հասարակական կազմակերպությունների  
գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, լրացման, հրապարակման և  
ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018  
թվականի փետրվարի 13-ի թիվ 59-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ  
102-Ն հրամանում (այսուհետև՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը.

Հրամանով հաստատված «Հավելված N 2»-ի 11-րդ կետը շարադրել հետևյալ  
խմբագրությամբ.

«11. Հաշվետվության «Կից ներկայացվում է» բաժնում «Կցել» ստեղծի միջոցով  
ընտրվում և կցվում է աուդիտորի եզրակացության ֆայլը, եթե Կազմակերպությունը  
հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից  
ֆինանսավորվել է տաս միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով և վերստուգող մարմնի

եզրակացության ֆայլը, եթե Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված է վերստուգող մարմնի կազմավորում, ինչպես նաև համապատասխանաբար նշում է կատարվում կցվող փաստաթղթերի քանակի վերաբերյալ: Կցված ֆայլը (փաստաթուղթը) հեռացվում է «Ջնջել» ստեղնի միջոցով:»

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



ԴԱԿԻԹ ԱՆԱՆՅԱՆ